



ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՕՆԻ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՅՍՕՐ ՅԻՍՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՕՆԷ

Մեռելներն յարութիւն անելի էտք, Յիսուս քառասուն օր երեւցաւ իր առաքեալներուն, եւ բազմաթիւ ձեւերով ցոյց տուաւ, որ ինք հաստատապէս ողջ է: Ան նաեւ անոնց հետ խօսեցաւ Աստուծոյ արքայութեան մասին: Անկէ ետք պատուիրեց անոնց Երուսաղէմէն չհեռանալ, այլ սպասել Հօրը խոստումին, որ իրենք լսած էին իրմէ:

Յիսուս ըսաւ.
 -Յովհաննէս ջուրով մկրտեց, բայց դուք մօտ օրէն պիտի մկրտուիք Սուրբ Հոգիով:
 Ուրիշ անգամ մը, երբ առաքեալները դարձեալ հաւաքուած էին, հարցուցին Յիսուսի.
 -Տէ՛ր, արդեօք հիմա՞ է ժամանակը, երբ պիտի վերականգնես Իսրայէլի թագաւորութիւնը:
 Յիսուս պատասխանեց.
 -Դուք չէք կրնար գիտնալ ժամերն ու ժամանակները, որ Հայրը որոշած է: Բայց երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, Անոր զօրութեամբ պիտի լեցուիք եւ իմ վկաներս պիտի ըլլաք Երուսաղէմի, ամբողջ Հրեաստանի եւ Սամարիոյ մէջ, ու մինչեւ աշխարհի ծայրամասերը:
 Յիսուս այս խօսքերը արտասանելէ ետք, մինչ առաքեալները կը նայէին անոր, ան երկինք համբարձաւ: Ամպ մը ծածկեց զայն առաքեալներու տեսողութենէն:
 Երբ տակաւին առաքեալները զարմացած վեր կը նայէին, յանկարծ երկինքէն երեւցան սպիտակ զգեստով երկու մարդեր, եւ ըսին.
 -Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնած էք ու երկինք կը նայիք: Այս Յիսուսը, որ երկինք համբարձաւ, նոյն ձեւով պիտի գայ՝ ինչպէս տեսաք անոր երկինք երթալը:
 Եւ աշակերտները սպասեցին Սուրբ Հոգիին գալուն:



Համբարձումը շարժական տօն է, ամեն տարի տարբեր թուականի կը նշուի, սակայն ան միշտ կը զուգահեռաբար Հինգշաբթի օրուան, իսկ հանդիսութիւնները կը սկսին Չորեքշաբթի: Այդ Չորեքշաբթին կիները «Ծաղկամօր Կիրակի» կը պահէին, ի պատիւ «Ծաղկամօր», որպէսզի ան իրենց երեխաներէն հեռու պահէ «ծաղիկ» ու «կարմրուկ» հիւանդութիւնները:

Ծաղկամայրը, ըստ աւանդութեան, Վարվառա անունով կոչու մըն է, որուն քրիստոնէութիւնը ընդունելուն պատճառով հետապնդեր է իր կռապաշտ հայրը, եւ ան Արեւմտեան Հայաստանէն փախչելով՝ եկեր ապաստաներ է Աշտարակի մօտ գտնուող Արայի լեռը: Հայրը զայն հետապնդեր է, եւ շրջանի հովիւները մատներ են Վարվառայի թաքստոցը: Յուսահատ Վարվառա նահատակուելէ առաջ Աստուծմէ խնդրեր է, որ ծաղիկ ու կարմրուկ հիւանդութիւն ունեցող մանուկները իր անունով բուժուին: Աստուած կատարեր է անոր խնդրանքը, եւ Վարվառային աղօթող մայրերուն զաւակները բուժուեր են այդ հիւանդութիւններէն:

Նոյն առիթով Վարվառա անիծեր է իր տեղը մատնած հովիւները, վերջիններս եւ իրենց ոչխարները քարացեր են: Մինչեւ այսօր աշտարակեցիները ցոյց կուտան այդ քարերը: Համբարձման Չորեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը Արայի լեռան շրջակայքի ժողովուրդը Ծաղկեվանք ուխտի կ'երթայ:

Ծաղկեվանքը կոչու Վարվառայի մահարձանը կը համարուի: Մամռոտ վանքին մէջ կայ աղբիւր մը, որ բուժիչ յատկութիւն ունի. կ'ըսուի, թէ աղբիւրը սկիզբ առած է Վարվառայի արցունքներէն:

ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՃ՝ ՈՒԹԱՅ ԿԱՌԵԱՆ-ՏԻՔՄԻՔԵԱՆՆ
 ՆԿԱՐԱԶԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱԹՆԱԳՈՒՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Համբարձման օրը բոլոր տուներուն մէջ առտու կաթնապուր կ'եփին: Ոմանք կաթնապուրի կաթսային տակ վառող կրակին մէջ կ'այրէին եօթը աղօթքով հանգուած ձեռքի կապը:

Հայաստանի ձորերուն մէջ քանի մը շերեփ կաթնապուր կը թափէին, ինչպէս նաեւ արտերուն շուրջը՝ բերքի առատութիւն ապահովելու եւ արտը կարկուտէն ու վնասակար միջատներէն պաշտպանելու համար:

Համբարձման օրուան կաթնապուրը մատաղ էր, անհկա կը բաժնուէր առնուազն եօթը տուն:


Շատ մը ընտանիքներ Չատիկէն մինչեւ Համբարձում կաթնապուր չէին եփեր, որպէսզի կովերուն կաթը չպակսի, իսկ Համբարձումին առաջին անգամ եփող կաթնապուրը յատուկ հանդիսութեամբ կ'ուտուէր:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵԱՅԼԱ

Յովհ. Թումանեան

Համբարձում եկաւ,
Ծաղկունքը ալուան,
Չուգել են հանդեր
Նախշուն գորգերով
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան,
Վիճակ հանելու աշխուժ երգերով
Համբարձում եայլա,
Եայլա ջան եայլա,
Լաւ օրեր եայլա,
Եայլա ջան եայլա:

Երգ ու բոյր խառնած,
Թեւ թեւի տուած,
Չուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում
Ինչպէս թիթեռներ:
Համբարձում եայլա,
Եայլա ջան եայլա,
Լաւ օրեր եայլա,
Եայլա ջան, եայլա:




Կրնա՞ս գտնել կերպարին համապատասխանող շուրջը:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած ութ մատիտները:

Տե՛ս, որքան պարզ եւ դիւրին է շուն մէջ գծելը:



ԹԱԳԱՒՈՐԻՆ ՆՈՐ ԶԳԵՄՏԸ

Ժամանակին թագաւոր մը կար: Այս թագաւորը շատ կը սիրէր նոր զգեստներ հագնիլ ու պալատին մէջ շրջագայիլ:

Տարին օր մը, անոր երկրին մէջ մեծ հանդիսութիւն կը կատարուէր: Թագաւորը կը հրաւիրէր իր դերձակները ու կը խնդրէր անոնցմէ, որ իրեն համար այնպիսի հագուստ մը կարէին, որուն նմանը երբեք հագած չըլլար:

Դերձակները իրարանցումի կը մատնուէին: Անոնք իրենց կարելին կ'ընէին գոհացելու համար թագաւորը, բայց թագաւորը չէր գոհանար:

-Աւելի՛ գեղեցիկը կ'ուզեմ, աւելի՛ զարդարունը կ'ուզեմ,- կը գոռար անդադար: Ծարահատ թագաւորին զինուորներէն մէկը քաղաքի հրապարակին մէջտեղ ծանուցում մը կը դնէ:

«Ան որ թագաւորին համար այնպիսի հագուստ մը կարէ, որուն նմանը երբեք հագած չըլլայ, պիտի վարձատրուի մեծ գումարով»:

Երկրի տարածքին գտնուող բոլոր դերձակները կը լծուին աշխատանքի: Ամէն ոք իր լաւագոյնը կը ջանայ պատրաստել, որպէսզի արժանանայ թագաւորին գնահատանքին... Բայց ի զուր:

Թագաւորը ո՛չ մէկուն պատրաստածը կը հաւնէր:

-Աւելի գեղեցիկը կ'ուզեմ, աւելի՛ զարդարունը կ'ուզեմ,- կը կրկնէր անդադար:

Օր մը պալատ կը ներկայանան երկու խաբէբաներ:

-Մենք շուկիակներ ենք,- կ'ըսեն անոնք,- իմացանք որ կը փափաքիք գեղեցիկ հագուստ մը ունենալ: Մենք ձեզի համար այնպիսի հագուստ մը պիտի պատրաստենք, որուն նմանը երբեք հագած չըլլաք:

-Ի՛նչ գոյն պիտի ըլլայ: Նո՛ր գոյն թող ըլլայ:

-Ո՛չ գոյնը կ'ըսենք ձեզի, ո՛չ ալ ձեւը: Մեր պատրաստելիք հագուստը կրնան տեսնել միայն խելացիները:

«Ի՛նչ լաւ,- կը մտածէ թագաւորը,- գոնէ այսպիսով կրնամ գանազանել շուրջս գտնուող խելացիներն ու յիմարները»:

-Անմիջապէ՛ս լծուեցէք աշխատանքի: Եւրբաթ մը պատրաստ կուզեմ տեսնել զայն,- կը հրամայէ թագաւորը:

Չուկիակները կը լծուին աշխատանքի: Անոնց ճահրակին ճռիւնջը կը հասնի մինչեւ թագաւորին դղեակը:

Քանի մը օր ետք, թագաւորը անոնց մօտ կ'ուղարկէ իր նախարարը:


Նախարարը երբ կը մտնէ շուկիակներուն աշխատանոցը, անակակալի կու գայ: Ան ո՛չ թէլ կը տեսնէ, ո՛չ հիւսուածք:

Չուկիակները իրենց քիթին տակէն կը խնդան:

«Այս մարդիկը խաբէբայ ըլլալու են,- կը մտածէ նախարարը,- երթամ եւ անմիջապէս իմացնեմ թագաւորին»:

Բայց ինչպէ՛ս ...Չապա՞ եթէ թագաւորը զիս յիմար կարծէ, հապա՞ եթէ զիս գործէն վռնտէ...»:

(Շարունակելի)



ՎԻՃԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Անցեալին վիճակի արարողութիւնը կը կատարուէր բացօթեայ, դաշտերուն մէջ: Աղջիկները կը բազմէին խոտերուն վրայ, իրենց մէջտեղը կը գետեղէին վիճակի փարջը, հարսի հագուստով անչափահաս աղջնակը կը նստեցնէին փարջին քով՝ երեսը քօղով ծածկուած: Իբրեւ անարատ եւ միամիտ երեխայ՝ ան էր, որ իւրաքանչիւր բախտագուշակ քառեակ երգէն ետք պիտի հանէր նշանները փարջին մէջէն:

Աղջիկներուն խումբը առաջին երգը կը նուիրէր վիճակի փարջին.

*«Վիճակ, վիճակ ծաղկավիճակ,
Շալէ շապիկ, նախշուն կոճակ:
Եկան տարան տիրոջ դուռը,
Ճակտին զարկին կարմիր նուռը,
Ջան, ծաղիկ, Համբարձում...»:*

Ասկէ ետք կը սկսէր հարիւրաւոր քառեակներու երգը, իսկ բազմութիւնը դրական վիճակ ինկած նշանի տիրոջ ուրախութիւն կը բաժնէր եւ կը մխիթարէր բացասական վիճակ ինկած նշանի տիրոջ:

Ահաւասիկ դրական վիճակի նմոյշ մը.

*«Ազգի, մանէ մանածոյ,
Չնա քաղէ ցանածոյ,
Այսօր վիճակի տօնն է,
Կը գտնես քո սիրածոյ»:*

Բախտաւոր, դրական վիճակի պարագային խումբը կ'երգէր.

*«Վիճակ, վիճակ դուրս ելաւ,
Վճկի, վրէն լոյս ելաւ,
Էս ինչ բարի բախտ ելաւ...»:*

Վիճակի արարողութիւնը վերջ գտնելէ ետք փարջին ջուրը կը թափէին արտերը: Շիրակի շրջանին մէջ հիւանդներուն տերերը այս ջուրէն տուն կը տանէին եւ իրենց հիւանդին գլխուն կը քսէին, որպէսզի վերջինս շուտ առողջանայ եւ կազդուրուի:



ՆԱԽԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ ՈՒ ՉԻՐՔԵՐՍ



Արփի Արապանեան
Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարան
Ը. կարգ



Ամէն մարդ նախասիրութիւններ կ'ունենայ, եթէ այդ նախասիրութիւնները զարգացնէ ձիրքի կը վերածուի, իսկ երբ ձիրքը զարգացնէ կրնայ տաղանդի վերածուիլ:

Ես ալ իմ կարգիս ունիմ նախասիրութիւններ: Ազատ ժամերուս կը սիրեմ գծել ու կարդալ: Երբ կը գծեմ ներաշխարհս թուղթին կը յանձնեմ, միտքերս կ'արտայայտեմ եւ երեւակայութիւնս կը զարգացնեմ, իսկ երբ կը կարդամ մտովի ուրիշ աշխարհ կը փոխադրուիմ, կը վերանամ ու կ'անջատուիմ միօրինակ առօրեայէս: Երաժշտութիւն ալ կը սիրեմ եւ ջութակ կը նուագեմ: Երաժշտութիւնը տրամադրութիւնս կը փոխէ:

ՀՄԸՄ-ի ճատրակի խումբին մաս կը կազմեմ, հաճոյքով կը հետեւիմ փորձերուն եւ կը ջանամ միտքս պահել մարզիչս թելադրանքներն ու ցուցմունքները: Ճատրակը միտքս կը մարզէ եւ յիշողութիւնս կը զօրացնէ:

Ուսումնական այս տարեշրջանը պսակածեւ ժահրին պատճառով կանուխ վերջացաւ ու ես կ'ուզեմ օգտուիլ այս առիթն՝ ժամանակ յատկացնել նախասիրութիւններուս, ջանքով ու աշխատանքով զարգացնել ձիրքերս:

